արծաթի հանդերձիք պաճուճեալ են. խորանաց ետի կողմը, 'ի միջավայրին մի մեծ խաչ, վրան փրկչական արձանով, և ընդ աջմէ ընծայարան, խաչ-կալին ետևի կողմը։ Սեղանից վրայ բաց 'ի արծաթապատ խաչէ և աւետարանէ՝ կայ ըստ Ռուսաց եկեղեցեաց՝ եօթնաջահեան աշտանակ մի։

Նախիջևան հասնելուս երկրորդ օրը՝ արգոյ բարեկամիս հետ՝ առաջին այցելութիւն Ս. Լուսաւորչիս տաճարին տուինք, ուր արդէն պատարագն առաջ գնացեր էր, այլ 'ի միջավայր դասուն կանգնած ալախսոսիկ դպիրն՝ իմ ուշադրութիւնս գրաւեց, իւր ախորժալուր երգեցողութեամբ։ Անմիջապէս ժամէն վերջը ծանօթանալով եկեղեցւոյն աւագ երէց Տէր Խաչատուր Զարիֆեանի հետ, մտանք պահարանը, ձեռագիրքը աչքէ անցընելու համար։ Լուսաւորչի պահարանը անհամեմատ կերպով հարուստ է գրչագրօք, քան այլոց եկեղեցեաց, ուր կան երկու հարիւրէն աւելի գրչագիրք, ըստ մեծի մասին հոգևոր գրեանք։ Մեծայարգ են երեք մագաղաթեայ աւետարանք՝ Կիլիկեան յիշատակարանօք. կան և 'ի Կաֆա գրուած պատկերազարդ աւետարանք, որոց նկարք ներկայացընեն փրկչական առակները. այս պատկերք նկարչութեան արուեստի մասին՝ գերազանց երևցան ինձ՝ քան մինչ ցայսօր տեսածներս հայկական ձեռագրաց մէջ, որ թերևս արդիւնք լինի մերայնոց ընդ Գենուացւոց ունեցած յարաբերութեանց. բաց յայսցանէ Լուսաւորչի պահարանին մէջ կը գտնուին ընտիր Ճաշոցք, Յայսմաւուրք, Ճառընտիրք, երկու օրինակ Սարգիս Շնորհալի, Գանձարանք, Շարականք, Պատարագամատոյցք, ընդհանրապէս մաքուր գրուած, որոց երեք չորրորդ մասը 'ի հաչակաւոր